

338.983.5

8-28

Պրոլետարիներ բոլոր յերկրների, միացեք!

ԺԱԿԱՆԵՐԻ ԱԽՑԻԼԻՒՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՐԴ

ՅԵՆՎԱՅ, 1929 թ.

07 FEB 2010

14 . 05 . 2013

Գրուետարներ բոլոր յերկրների, միացվել

338.983 : 33
0-2832

ԱԿ

535

ՅԱՎԱԼԵԿՔ ԱՊՈՒԱՀԻՄԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ



* ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՔԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ապրիլ 1929 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ազգային գրադարձ

14852-57

ՀԱՄ Կ (Բ) 16-ՐԴ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԿՈԶԸ
ԽՈՐՀԻՇՏՈՒՆ ՄԻՊԱԹՅԱՆ ԻՆԼՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՑԵՆ
ԳՅՈՒՂԵՑԻՆԵՐԻՆ

Հ Ն Կ Ե Ր Ն Ե Ր

Պատմությունը վիթխարագույն խնդիրներ
ե գրել մեր յերկրի աշխատավորության առաջ:
Մենք պետք ե համեմատաբար պատմական մի
կարճ ժամանակամիջոցում տեխնիկ-տնտեսա-
կան տեսակետից հասնենք յեվ գերազանցենք
կապիտալիստական առաջավոր յերկրներին՝ կեն-
սագործելով բովանդակ ժողովրդական տնտե-
սության սոցիալիստական ռեկոնստրուկցիան:
Մենք պետք ե ապահովենք ինդուստրիալի արա-
գաթափ աճումը յեվ սրա հետ միասին՝ գյու-
ղատնտեսության վերելքը, ավելի յեվ ավելի
զարկ տալով համայնացված տնտեսությանը
գյուղում (խորհնանատեսություններին յեվ կուտն-
տեսություններին), հիմք ունենալով մերենա-
յացման բարձր տեխնիկան: Մենք պետք ե ծա-
վալենք մասսաների ամենալայն շարժում գեպի
կուլառուրան յեվ վերացնենք մեր պետական
ապարատից շռայլության, անտնտեսավարու-
թյան, բաշրջուկի յեվ բյուրոկրատիզմի բոլոր
յեվ ամեն տեսակի ելեմենտները: Մենք պետք
ե հաղթահարենք յեվ վտարենք կապիտալիստա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԱՆՔԻ ՏՄԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 154
ԳՐԱՌԵԴԱԿՑԻԱՐ 2770 (բ)
ՏԵՐԱԳ. 5000

կան տարրերը վոչ միայն քաղաքից, այլեւ գյուղից: Մենք պետք ե անշեղորեն ամրապնդենք հորհրդային Միության պաշտպանունակությունը:

Բոլոր այս խնդիրների կենսագործումը հիմնված պետք ե լինի բանվորների, աշխատավորների յեվ գյուղացիների կայուն դաշինքի վրա՝ բանվոր գասակարգի ղեկավարությամբ:

Ի կատարումն այս խնդիրների՝ կուսակցության շինարարության հնգամյա պլանը, վոր կուսակցության ծրագիրն ե հանդիսանում՝ յերկրի տնտեսական յեվ կուտառեական հետամնացությունը վերացնելու՝ սոցիալզմի շինարարության յեվ միջազգային պրոլետարական հեղափոխության հաղթական ծալվալման նանապարհին:

Հնգամյակի ընթացքում 64 միջիարդ ռուբլի յե ներդրվելու ֆաբրիկաների, գործարանների, ելեկտրակայանների, յերկաթուղինների, խորհուտեսությունների, կոլտնտեսությունների յեվ դպրոցների շինարարության մեջ: Սոցիալիստական արդյունաբերության մակարդակը մինչպատերազմյան արդյունաբերության մակարդակից յերեք անգամ ավելի բարձր ե լինելու: Բոլոր ֆաբրիկաները, գործարանները յեվ հանքանորերն անցնելու յեն յոթժամյա աշխատանքի որի:

Յերկրի ինդուստրացման արագացված թափը յեվ գյուղատնտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիան, պրոլետարիատի ուժեւ

դաշված առաջնազացման պայմաններում քաղաքի յեվ գյուղի կապիտալիստական տարրերի դեմկատաղի ընդդիմադրություն յեվ հականարդաված են առաջ բերում դասակարգային թշնամիների կողմից: Կուլակը յեվ նեպմանն առանց պայքարի չեն զիջիելու իրենց դիրքերը: Կուլակներն ընդդիմանում են խորհրդային քաղաքականության հացամթերումների գործում, կորուտեսությունների յեվ խորհուտեսությունների շինարարության գործում, ինչպես փորձում են տերրորի միջոցով վախսենել նոր գյուղը կառուցղներին: Կուլակին յեվ նեպմանին ոժանդակում յեվ աջակցում են արդյունաբերության մեջ յեղած հականեղափոխական մնասարարները, իսկ սրանց աջակցում են մեր հիմնարկներում նստած բյուրոկրատները, վոգեվորում յեվ ամեն կերպ աջակցում են ոտարերկրյա կապիտալիստները:

Մեզ ոտար յեվ խորթ դասակարգերի գնշումը տատանումներ յեվ վարանումներ առաջացրեց բանվոր գասակարգի յեվ գյուղացիության վորոշ միջնախավերում յեվ ծնունդ տվեց ոպորտյունիստական աջ թերման՝ Կոմկուսակցության շարքերում: Միայն հաղթահարելով իր շարքերում յերեվացած այս վարանումներն ու տատանումները, միայն ջախջախիչ հարված հասցնելով աջ թերման՝ կուսակցությունն ու պրոլետարիատը կկարողանա փշրել դասակարգային թշնամիների ընդդիմադրությունը յեվ կենսագործել սոցիալիզմի շինարարության հնգամյա պլանն ընդհանուր առմամբ:

Եինարարության տարբեր ետապներում մեր յերկրի բանվոր դասակարգի առջեվ բազմաթիվ խոշնգուտներ յեվ դժվարություններ են յեղել ծառացած, վորոնց հաղթահարման համար հսկայական նշանակություն ե ունեցել բանվոր դասակարգի մասսայական նախաձեռնության ծավալումը:

1919 թվականին, յերբ մեր յերկրո՞ւ սպիտակ բանդիտներով յեվ ինտերվենտներով ողակված, խեղդվում եր քայլայման յեվ սովի նիւրաններում, յերբ ուզմանակատներում կոտորվում եյին հազարավոր լավագույն պրոլետարներ ու գյուղացիներ, ահա այդ ժամանակ բանվորները թիկունքում, սովից ու քաղցից հյուծված, ահավոր քայլայման պայմաններում, իրենց սեփական նախաձեռնությամբ սկսեցին կոմունիստական շաբաթորյակներ կազմակերպել՝ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու յեվ պրոլետարական պետության համար անհրաժեշտ հացից ածուխից յեվ այլ վառելիքից մի հարյուր փութել ել ավելի ծեռք զցելու: Այն ժամանակ Լենինը շաբաթորյակներն անվանեց «մեծ նախաձեռնություն» յեվ բանվորների հերոսություն՝ թիկունքում»:

1920 թվականին կուսակցության Թ. լդ համագումարը վորոշում կայացրեց աշխատանքի մրցության մասին, վորի գաղափարը Լենինն անխօնիորեն կապում եր սոցիալիզմի շնարարության գործի հետ:

«Սոցիալական յուրաքանչյուր հասարա-

կակարգ (սորկատիրական, ճորտատիրական կապիտալիստական), — ասված ե 9-րդ համագումարում արի վորոշման մեջ, — ունեցել ե աշխատանքի հարկադրության ու դաստիարակության սեփական մեթոդները՝ հոգուտ շահագործող վերնախավերի: Խորհրդային իրավակարգի առաջ ամբողջ հասակով ծառացած ե իր ազդեցությունը զարգացնելու սեփական մեթոդների խնդիրը, նպատակ՝ ունենալով բարձրացնելու աշխատանքի ինտենսիվությունը յեվ նպատակահարմարությունը, իմբը ունենալով համայնացված տնտեսությունը՝ հոգուտ ամբողջ ժողովրդի: Աշխատավոր մասսաների վերաբերմամբ կիրառվող ազիտացիոն-գաղափարական ներգործության յեվ ակնհայտ ծույլերի, պորտաբույծների ու կազմալուծողների վերաբերմամբ կիրառվող ուսարեսիխաներին զուգընթաց՝ աշխատանքի արտադրականությունը բարձրացնելու տեսակետից հզորագույն մի ուժ ե հանգիսանում մրցությունը: Կապիտալիստական հասարակության մեջ մրցությունը կոնկուրենցիայի բնույթ ունի յեվ հանգում ե մարդու շահագործման՝ մեկ ուրիշ մարդու կողմից: Այն հասարակության մեջ, վորտեղ արտադրության միջոցներն ազգայնացված են աշխատանքի մեջ, առանց համերաշխությունը խախտելու, մրցումն ուղղակի ավելի պետք ե բարձրացնի աշխատանքի արդյունքների ընդհանուր գումարը: Մրցությունը տարբեր գործարանների, ռայոնների, բաժանմունքների, արհեստանոցների յեվ

առանձին բանվորների միջեվ պետք և ամենա-
խնամքու կազմակերպության յեվ ուշադիր ու-
սումնասիրության առարկան դառնա՝ արհես-
տակցական միությունների յեվ տնտեսական
մարմինների կողմից»:

Կուսակցության 9-րդ համագումարի այս
վորոշումն այսոր ել միանգամայն ժամանակա-
կից ու կենսական վրոշում եւ:

Ընկե՛ր բանվորնե՛ր յեվ աշխատավո՛ր գյու-
ղացիննե՛ր:

Սոցիալստական շինարարության դժվա-
րությունները հաղթահարելու, բաղաքի յեվ
գյուղի կապիտալիստական տարրերի դեմ հե-
տագա առաջախաղացումը ծավալելու յեվ հնգա-
մյա պլանն ի կատար ածելու համար մրցու-
թյուններ կազմակերպեցեք շինարարության բո-
լոր ասպարեզներում, մրցություններ կազմա-
կերպեցեք ֆաքտիկաների, գործարանների, հան-
քահորերի, յերկաթուղինների, խորհտնտեսու-
թյունների, կոլտնտեսությունների, խորհրդային
հիմնարկությունների, դպրոցների յեվ հիվանդա-
նոցների միջեվ:

Մրցություններ կազմակերպեցե՛ք ինք-
նարժեքի իջեցման, աշխատանքի արտադրո-
ղականության, բարձրացման, աշխատավիճայի
ամրապնդման, ցանքսային տարածությունների
ընդարձակման, գյուղացիությունը կոլտնտեսու-
թյունների յեվ կոռպերացիայի մեջ ներգրավե-
լու, բերքատվության բարձրացման, պետա-
պարատի պարզեցման, վերջինիս կապը մաս-

սաների հետ ամրացնելու յեվ աշխատավոր
մասսաների սպասարկող կուլտուրկենցաղացին
հաստատությունների աշխատանքը բարելավե-
լու համար:

Լենինյան Կոմյերիտամության յեվ մամուլի
նախաձեռնությամբ այս տարի ծավալված սո-
ցիալիստական մրցությունն ավելի յեվ ավելի
հզոր մասսայական մի շարժման ե վերածվում:
Մրցության առաջին բայլերի հետեվանքով
Դոնբասի հանքագործները մարտ ամսին գերա-
զանցել են ածուխի արտադրական ծրագիրը:
Իվանովո-Վոլոգդանեսակի, Տվերի յեվ Մոսկվայի
մանածագործներն իրար հետ տնտեսա-քաղա-
քարական պայմանագիր են կնքել՝ ընթացիկ
տնտեսական տարվա արդյունաբերական ֆին-
պլանը կենսագործելու մասին: Ուրալի, Լենին-
գրադի, Դնեպրոպետրովսկի, Մոսկվայի յեվ
Ռոստովի բանվորները հարցուրավոր հարվա-
ծային բրիգադներ յեվ հերթափոխել են ստեղ-
ծել: Որեցոր նորանոր բանվորական զոկատներ
են մասնակից դառնում այս մրցությանը: Ար-
դեն մրցել են սկսում իրար հետ Ռուսային
կոլտնտեսություններն ու խորհտնտեսություն-
ները, իսկ նրանց հետ միասին բերքաշավի յեվ
կոլեկտիվացման արշավի յեն դուրս յեկել Սի-
րիուսը, Հյուսիսային կովկասը յեվ Միջին ու
ստորին Վոլգան:

Աշխատավորների աշխատանքի հերոսու-
թյունն ու ինքնազոհությունը արտահայտվում
ե նաեվ տոնական որերի արտադրանքի նորման

կամավոր կերպով բարձրացնելու, առաջարկությունների յեզ արտադրական խորհրդակցությունների հսկայական աճման, ծույլերին յեզ գործալքողներին բոյկոտ հայտարարելու յեզ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար մղվող պայքարի ծեփով։

«Կոմունիզմն սկսվում ե այնտեղ, վորտեղ արտահայտվում են շարքային քանվորների ինքնազմությունը յեզ ծանր աշխատանքը հաղթահարելու հոգսը՝ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար» (Լենին):

Մըցությունը, զարթեցնելով մասսաների ստեղծագործական յեռանդն ու նախաձեռնությունը՝ մշտական յեզ կայուն մի մեթոդ պիտի հանդիսանա աշխատավորներին սոցիալիստական շնչարարության մեջ ներգրավելու համար։ Մըցությունը՝ ինքնաբնադատության հետ միասին՝ բանվոր դասակարգի սոցիալիստական դաստիարակման միջոցը պիտի դառնա, մանավանդ գյուղից յեկած յեզ բաղաքի մանր բուրժուական խավերից յելած նորեկ բանվորների համար։ Մըցությունը պետք ե առաջնորդի դեպի մեր հասարակական յեզ պետական կազմակերպությունների յեզ, առաջին հերթին, դեպի մեր արհմիությունների ու տնտեսական մարմինների աշխատանքի ծեփերի ու մեթոդների վերակառուցումը, նպաստելով մասսաների լայն ներգրավմանը՝ տնտեսության յեզ ամբողջ պետության կառավարման գործի մեջ։

Արհմիությունները յեզ տնտեսական մարմինները լայն կերպով պետք ե կիրառեն մըրցության մասնակիցներին խրախուսելու յեզ բազալերելու սիմուեմը։ Լավագույն քանվորների, մասնագետների, տնտեսավարների յեզ ագրոնոմների անունները, ինչպես նայել գործարանների, հանքահորերի, լավագույն խորհութեանների ու կուտնտեսությունների անունները հայտնի պիտի դառնան ամբողջ յերկրին։

Պետք ե այնպես անել, վոր ամեն մի կոմունայի տնտեսության գործնական արդյունքների համեմատությունը դառնա ընդհանուրի հետաքրքրության յեզ ուսումնասիրության առարկան, վոր այս կոմունաները պարզեվատըրվեն անմիջապես (վորոշ ժամանակով աշխատանքի որը կրիատելու, աշխատավարձը բարձրացնելու, կուլտուրական յեզ եստետիքական ավելի շատ արժեքներ տրամադրելու յիշ այլ միջոցներով) (Լենին):

Մամուլը պետք ե մասսաների դատարանին ներկայացնի մըցող ծեռնարկությունների գործնական արդյունքների համեմատությունը, սիստեմատիկորեն լուսաբանելով մըցության ընթացքը և բարձրացնելով ամենալայն հետարքը ություն դեպի այս մըցությունները։

Անցյալ տարիների հերոսական տրադիցիաները պահպանված յեզ պարզաբանված են մեր յերկրի բանվոր դասակարգի կողմից։ «Սոցիալիստական հիմունքներով մըցություն կազմակերպելու» լինինյան գաղափարը բանի գնում՝

գործնականապես այնքան ավելի յեւ մարմնանում. Դեպի աշխատանքը կոմունիստորեն վերաբերվելու սկզբունքներն ավելի յեվ ավելի յեն արժատանում մեր արտադրության մեջ. Զեռնարկություններում յեվ հիմնարկներում ստեղծվող հարվածային բրիգադները կոմունիստական շարաթորյակների լավագույն տրադիցիաների շարունակողներն են հանդիսանում. Արտադրական ստուգատեսները մրցություններին արձագանքել յեվ այլն, արտադրական խորհրդակցությունների յեվ կոնֆերենցիաների աշխատանքի ծավալի ու թափի ընդարձակմանը զուգընթաց, հսկայական նշանակություն են ստանում սոցիալիզմի շինարարության ամբողջ գործի համար:

Խորհրդային գործարաններում յեվ ֆաբրիկաներում աճում ե սոցիալիստական բանվորների նոր տիպարը. Աճում ե աշխատավոր մասսաների գերն ու մասնակցությունը պետություն կառավարելու գործում. Ծավալվող սոցիալիստական շինարարությունը լավագույն յերաշխիքներից մեկն ե, վոր հիմնվելով կուսակցության ղեկավար գծի վրա. հնգամյա պլանը կենսագործվի, յեվ բանվոր դասակարգը, հակառակ թերահավատների յեվ պանիկորների ոպորտյունիստական տատանումների, հակառակ իր դասակարգային թշնամիների կատաղի ընդիմադրության, գյուղի աշխատավորական մասսաների հետ ձեռք ձեռքի տված՝ հաղթականորեն առաջ կդնա սոցիալիստական

հասարակություն կառուցելու ճանապարհով:

Հնգամյա պլանը, բանվոր դասակարգի պայքարի պլանն ե՝ հանուն կապիտալիստական տարրերի հաղթահարման, մասսաների սոցիալիստական վերադաստիարակման յեվ սոցիալիստական հասարակության հիմքեր ստեղծելու:

Սոցիալիստական մրցությունն ուժեղ միջոց է հնգամյա պլանը կենսագործելու նպատակով մասսաների նախաձեռնությունն արթնացնելու յեվ կազմակերպելու յեվ սրա հետ միասին, հզոր մի միջոց է ինքնաքննադատությանը ներքեւից զարկ տալու համար:

Մրցությունը յեվ հնգամյա պլանի իրար հետ սերտ կապ ունեն:

Այս խնդիրների նշանաբանով ԽՍՀՄ պրոլետարիատը հետագա առաջխաղացման ե դիմում պրոլետարական դիկտուրայի դասակարգային թշնամիների դեմ:

Կուսակցությունը կոչ է անում բոլոր պրոլետարներին, քաղաքի յեվ զյուղի բոլոր աշխատավորներին՝ Համ. Կ (բ) կ լենինյան դրոշակի ներքս ել ավելի մեծ ծավալելու իր պայքարը՝ հանուն ԽՍՀՄ ինդուստրացման յեվ հանուն սոցիալիզմի:

Կեցցե՞ սոցիալիստական մրցությունը. Կեցցե՞ կոմունիզմը:

Համ. Կ (բ) և 16-րդ կոնֆենքտ, իւ.

1929 թ., 29 ապրիլի.

ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԹԱՑՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԿՈՌՈՒՐԱՑԻԱՅՑՈՒՄ

Մեր ժող. տնտեսության զարգացման ներկա շրջանում բավական մեծ յեկ պատասխանատու անելիքներ ունի սպառողական կոռպերացիան:

Ապրանքաբաշխման հետ կապված խնդիրները, գյուղատնտեսական ապրանքների մթերումը, կոռպերատիվ ցանցի հետագա լայնացումը, մեր բանվորական վայրերի տնտեսական սպասարկման կազմակերպումն ու լավացումը, գյուղի քավորության գլխովին կոռպերացումն ու նրա կոռպերատիվ մարմիններում ղեկավար աշխատանքների քաշելը, վերջապես կուլտուր-կրթական աշխատանքն ու ինքնարնադատությունը վողջ կոռպերատիվ միստեմում ծավալելը կազմում են կոռպերատիվ հընգամյա պլանի հիմքը:

Ամեն մի սպառկոռպ, ամեն մի կոռպերատիվ միություն արդեն գործնականում կիրառում են այդ խնդիրները, վորոնք պետք են ասել դեռ յեփս վորոշ ժամանակ կատարվելու յեն մեր տնտեսական վորոշակի դժվարություններին զուգընթաց:

Այդ դժվարությունները վճռական կերպով հաղթահարելու ամեն մի տեսակի թափթափվածության, բյուրոկրատիզմի, ծուլության, վնասարարության յեկ այլ կազմալուծիչ յերեվույթների դեմ պայքարելու, աշխատացիպինակնան ուժեղացնելու յեկ մեր աշխատանքներն ավելի կազմակերպված ծեփով տանելու համար պետք ե մոբիլիզացիայի ընթարկվեն մեր բոլոր ուժերը յեկ միջոցները: Այդ ուժերը զորահավաքի յենթարկելու, միլիոնավոր բանվոր ու գյուղացի մասսաներին սոցիալիստական շինարարության աշխատանքներին գործնականուրեն յեկ ավելի մոտիկից մասնակից անելու ամենահիմնական միջոցը սոցիալիստական մրցակցությունն ե, վորն ել ավելի պետք ե ծավալենք մեր աշխատանքների մեջ:

Հայաստանի սպառողական կոռպերացիայի սիստեմում վերջին ամիսների ընթացքում ըսկեսվել ե սոցիալիստական մրցությունը: Արդեն դուրս են յեկել մրցության մեր կոռպերատիվներից շատերը, կնքված են պայմանագրեր նրանց միջևից: Անկասկած, այս աշխատանքի առանձին արդյունքները մենք արդեն ստացել ենք, բարձրացել ե աշխատանքի դիսցիպլինան, մեծացել ե պարտաճանաչության գիտակցությունը, աշխատանքի վորակը բանի գնում լավանում ե յեկ այլն: Սակայն զրա հետ մեկտեղ մենք պետք ե ամենահամարձակ կերպով արձանագրենք, վոր սոցիալիստական մրցության հզոր գենքը՝ մեր հազարավոր մասսաների ծեռ-

բում դեռ չի սգաագործվել բավարար չա
Այս մասին միանգամայն պարզորոշ կերպով
ասված ե Խորաշխի միության կենտրոնի յեզ
Յենտրոսոյուղի միատեղ շրջաբերականում, վորը
տպված ե սույն գրքույկում:

Այնտեղ թված բացերն ամբողջովին նկա-
տի յեն ունեցել նաև մեզանում, վորոնք ա-
վելի կոնկրետացրած ծեվոլ կայանում են հե-
տեւյալում:

1) Բավական յերկար ծամանակ պարզու-
թյուն չի յեղել սոցիալիստական մրցման աշ-
խատանքների ծեվերի մեջ, շատ կոռպերատիվ-
ներ ուղղակի չեն իմացել՝ ինչպես դուրս գալ
սոցմրցության, ինչ խնդիրների շուրջը և ինչ
ձեվով:

2) Սոցմրցության աշխատանքները շատ
տեղերում մեզանում նույնակես տառապել ե ա-
պարատային ցավով: Մասսաները չեզոքացված
են, չեն մասնակցել, չեն յերելացել սոցիալիս-
տական մրցման գործում: Սա անշուշտ սոցիա-
լիստական մրցության աղավաղումն ե նշանա-
կում:

3) Պրոֆմիությունների, ինչպես յեզ բար-
ձրագույն կոռպերատիվ որգանների կողմից ղե-
կավարությունը յեզ ցուցմունքները յեղել են
թույլ:

4) Տեղերում չափագանց թույլ ե կնքված
սոց. մրցման պայմանագրերի ստուգման
գործը:

Կարծեք թե սոցմրցության դուրս գալը

մի տեսակ ծեվականություն եր, վորը կանար-
ված, վերջացավ պայմանագրի ստորագրումով:

Անհրաժեշտ ե ամեն որ, ամեն շաբաթ,
ամեն ժամ ստուգել յեզ հետեւյել թե վոր չա-
փով յեզ ինչպես ե կիրառվում սոց. մրցման
պայմանագրերը: Սա ամենաշեյականն ե:

5) Մեր գլխավոր թերություններից մեկն
ել այն ե, վոր շատ վատ ե դրված մրցության
աշխատանքների հաշվառման գործը: Փոխա-
դարձ ինֆորմացիա չկա, այդ պատճառով դրա-
կան փորձի փոխանակումը բացակայում ե:
Սա նույնպես կարեվոր մոմենտ ե:

Արծանագրելով այս մի բանի կարեվոր
թերությունները, վորոնք գործ ունեն չայսա-
տանի սպառկոռպերացիայի կողմից տարկող
սոց. մրցման աշխատանքների մեջ յեզ տպա-
գրելով Խորաշխի միության Ցենտրոսոյուղի
միատեղ նամակը, ինչպես յեզ Կոմկուսի 16-րդ
կոնֆերենցիայի կոչը՝ սոցիալիստական մրցման
նշանակության մտսին, մենք հավատացած ենք,
վոր սրանով նոր թափ ու յեռանդ կտանա
մեզանում սոց. մրցության աշխատանքը: Ամեն
մի բանվոր, ամեն մի գյուղացի, կոռպերատիվ
աշխատող, պետք ե կարդա յեզ ուսումնասիրի
այդ փորոշումները յեզ լծվի նրանց կիրառման
գործին:

Այդ վորոշումների մեջ միանգամայն
պարզ կերպով հիշված ե սոցմրցության դուրս
յեկող յուրաքանչյուր կազմակերպության կամ
անհատի կատարելիք աշխատանքը յեզ նրա
ձեվերը:



Խորաշխ միության յեվ Ցենտրոսոյոյզի
միատեղ նամակը պարզաբանում յեվ պատաս
խանում և բոլոր այն տրվող հտրցերին, վորոնք
դեռեփս կային սոց. մրցության աշխատանք-
ների մեջ:

Սրանից հետո մեզ մնում ե' ել ավելի ծա-
վալել սոցմրցությունը, հաշվի առնել յեվ ստու-
գել կատարված աշխատանքը, շտապ կերպով
վերացնել նկատվող թերությունները յեվ ավե-
լի կրկնապատկված յեռանդով շարունակել սոց.
մրցությունը սպառկոռպերացիայում. կիրա-
ռենք մեր հիմնական լողունզը՝ վոչ մի սպառ-
կոռպի կոլեկտիվ առանց սոցմրցման պայմա-
նագրի. դուրս գանք սոցմրցության:

ԱՐՅՈՒՈՒԹԵՆԱԿԱՆ ՈՒ ԿՈՌԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔԸ՝ ՍՈՑԻԱԼԻՍՄ-
ԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ
Միության և. Կ-ի ու Ցենտրոսայուզի սիամեզ
նամակը

ԽՈՐԾՈՒԺԱԲԻ ՄԻԱԽՅԱՆ ԲԱԼԱՐ ԲՅՈՒՆՆԵՐԻՆ Ի՛ԼՈՐԿՈՅ-
ՊԵՐՁԻԿ ՄԻԱԽՅՈՐՆՆԵՐԻՆ ԵԵՎ. Կ. Բ. ԿՈՂԵՐԵՑԻՎ-
ՆԵՐԻՆ

ՀԱՐԳԵԼԻՇ ԸՆԿԵՐՆԵՐ

Սոցիալիստական մրցությունը կոռպերա-
ցիայի աշխատանքների մեջ իրական արդյունք
պետք ե տա՝ կոռպերատիվ ապարատը լավա-
ցնելու, եժանացնելու յեվ բանվորների ու գյու-
ղացիների սպասարկման գործին իսկապես հար-
մարեցնելու ասպարեզում. բյուրոկրատիզմի,
քաշքուկների յեվ անտեսեավարության դեմ
պայքար մղելու, աշխատանքի արտադրողակա-
նությունն ու ինտենսիվությունը (թափօ) բար-
ձրացնելու յեվ սպառողի սպասարկումը վորա-
կապես լավացնելու ասպարիզում:

ՍՏՈՒԳԵՆՔ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԿՈՂԵԿՏԻՎ. ՈՒԺԵՐՈՎ.

Կոռպերացիայի աշխատանքներում դասա-
կարգային ճիշտ գիծ անցկացնելու համար մըդ-

վող պայքարի մեջ սոցիալիստական մրցությունը պետք է ներգրավի բանվորական յեվ աշխատավոր գյուղացիների լայն մասաներին ու կոռպերատիվ ապարատի կես միլիոնանոց մասային:

Ներկայումս արդեն հնարավոր է յեվ կարելի յեւ տալ սոցմրցության նախնական վորոշ արդյունքները.

Միանգամայն անհետաձգելի յենք համարում շետել յերեվան բերված՝ սոցիալիստական մրցման հիմնական զծի այն աղավաղումները, վոր Համ. Կ. Կ. (թ) համամիուրենական 16-րդ կոճաբերենցիան և նույն յեվ վորոնք բողարկում (ժաշկում) են այս մրցման իսկական բնույթը: Հիմնական աղավաղումները այն ե, վոր մրցման գործում մասսաների մասնակցությունը շատ բույլ և հանգես գտնիս: Այս աղավաղումներն իրենց արտահայտությունը մասնավորապես գտնել են այն բանի մեջ, վոր սույն մրցությունն անցկացնելիս թերագնահատվում է արհմիութենական կազմակերպությունների նշանակությունը, չնայած, վոր կուսակցական դիրեկտիվներով մրցման ղեկավարությունը դրված է արհմիությունների վրա:

Արհմիութենական առանձին մարմինները հարկավոր միջոցներ ծեռք չեն առել վերացնելու հիշյալ աղավաղումները:

Տեղերից ստացվող մի շարք տեղեկությունները բավականաշափ հաստատում են այս դրությունը, ցույց տալով թե սոց մրցման հրա-

վիրելու յեվ թե մրցումը կոպերատիվ ապարատի վերանախավերի կողմից անցկացնելու բազմաթիվ որինակներ:

Մրցման այն ոբեկտները, վոր մասսաների կոլեկտիվ մասնակցությամբ չեն սուլգված, իւրականացնելու ջնրացեում շատ անգամ չեն սեղծում այն անհրաժեշտ վոգեվորությունը, վոր այս ձեռնարկությունների եթեկավորման կարեվորագույն գրավականն ե հանդիսանում

Այս դրությունը յերկյուղեւ առաջ բերում, թե չեն ոգտավործվելու բոլոր այն հնարավորությունները, վոր աշխատավոր մասսաներն ունեն յեվ պահանջում են առանց հետաձգելու ուղղել հայտնաբերված սխալները՝ պարզ կերպով վորոշելով մրցմանը մասնակցող զանազան կատեգորիաների անելիքները: Պետք ե պարզ յեվ վորոշակի կերպով կոնկրետացնել այն խընդիրները, վորոնց շուրջը հետագայում ծավալվելու յեւ սոց. մրցությունը, պետք ե լայն կերպով մասսայականցել այն ծեվերը, վորոնք գործնականում ցույց են տվել իրենց առավելությունը սոց. մրցման կիրառման ընթացքում:

ՅԵՐԿՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Կոռպերացիայի գծով, սոցմրցությունը յերկու ուղղությամբ պետք է զարգանա, Մի կողմից մրցման են մասնում կոռպերացիայի ապարատի աշխատակիցները, իսկ մյուս կողմից՝ ինքը՝ կոռպերացված բնակչությունը: Այս

Խւզզությունններից ամեն մեկն ունի իր ինքնուռուցիչն նշանակությունը:

Այս ուղղությունններին միանգամայն համապատասխան կերպով լուծվում են նաև սոց. մրցման կազմակերպչական ծեփերը:

Այսպես, կոռպերացիայի ապարատի մրցման դեպքում սոցմրցման ընույթն ու ծավալը լուծվում են տեղերում, անպայման մրցող կազմակերպությունների կողմից՝ արհմիութենական տեղական մարմինների անմիջական ղեկավարությամբ: Ճիշտ այսպես ել ֆայատերի մեջ մրցություն կազմակերպելիս՝ մրցման մենելու, մրցման որեկտներ ընտրելու գորոսումները ֆայատերեն իրենք միայն կարող են անել:

Այս պատճառով՝ սոցիալիստական մրցման շահերին բոլորվին չի համապատասխանում այն հանգամանքը, յերբ կոռպերատիվ վարչություններն իրար հետ անմիջականորեն պայմանադրեր են կնքում զանազան ոբեկտների շուրջը, վորոնց կատարումը կախված է կոռպերացված մասսայից ու ծառայողներից. վորոնք սակայն չեղոքացվում են, մի բան, վոր վիճակար կերպով և ազդում գործի վրա:

Սոցիալիստական մրցման աշխատանքների մեջ նկատվում ե, վոր մեծ ձգտում կա ԽՍՀՄ-ի կոռպերատիվ մարմիններին մեկեն զգայի չափով մրցման հրավիրելու: Դեպքեր կան, վոր յերկրային ու մարզային առանձին միություններ մրցման են հրավիրում տատնյակ ուրիշ

միություններ: Միության կեն ու Յենտրոսույուղի վարչությունն առաջարկում են գլխավոր ուղարկությունը՝ դարձնել կոռպմիության, կբ կ-ներում՝ բաժինների, առևտրական առանձին ծեռնարկությունների, խանութների բաժանմունքների ու առանձին ծառայողների միջեվ մրցումը նիշտ կերպով կազմակերպելու գործին:

Զանազան շրջանների կամ մարզերի միուրենական միավորությունների մեջ մրցություն կազմակերպելիս ցանկալի յե, վոր այս մրցումն սկսվի այն ժամանակ, յերբ արգեն մրցություն կազմակերպված կլինի սկզբնական կոռպերատիվ կազմակերպությունների առանձին ֆայատերերի, խանութների ու բաժինների միջև. յերբ բոլոր կողեկտիվները կամ, գոնե, կոռպերատիվ հիմնական կազմերն իսկապես կներգրավվեն սոցիալիստական մրցման մեջ:

Ենթաձեռք ե կազմակերպել ֆայատերերի ամենալայն մասսաներին, վորոնք մրցման կարգով մասնակից պետք ե արվեն իրենց պարտականությունների կատարման, վոր բղխում են կոռպերացիայի զարգացման հնգամյա պլանի առաջադրած խնդիրներից յեվ առանց վորոնց մասնակցության մրցումը կզանար զուտ ապարատային մրցում:

Փայատերերի մեջ մրցություն կազմակերպելու գործի զեկավարությունն ընկեռում ե կոռպերատիվ մարմինների վրա՝ կոռպերատիվ, հասարակական ու տեղական կազմակերպու-

Թյունների՝ մասնակցությամբ՝ սրանց հետ միասին իրականացնելով մրցումը ծավալելու հըսկողությունը։ Անավասիկ մրցման ղեկավարության կազմակերպական ծեփերի հիմնական գծերը։

Փյու աշխատանքի մեջ զլխավոր ռւեագրությունը պետք է դարձվի ամեն մի եթևարկի, բաժանմունքի, բանվորական հերթերի, կուսանեսության, խորենեսության յեզ ամեն մի զյուդկոոպա փայտերերի միջեզ մրցություն կազմակերպելու գործին։ Աշխատանքն այս ուղղությամբ ծավալելու բազայով ու փայտեր մասսաներին ներզրավելով միայն կհացողվի իսկական նվաճումներ ծեռք բերել։

Փայտերերի մեջ մրցման աշխատանք կատարելու զեկավարությունը զլխավորապես պետք է հենվի կոոպ. կուլս. հանձնաժողովների, կոոպիտազութերի, խանութային եանձնաժողովների վրա, վորոնք աշխատանքը կատարում են կոոպերատիվ ակտիվի ու փայտերերի միջոցով։

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՄՐՑՄԱՆ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՑՆ ՈԲԵԿՑՆԵՐԸ

Անցնելով կոոպերացիայի աշխատակիցների մեջ սոց. մրցում առաջացնելու ոբեկտների հարցին, պետք է այս կամ այն հիմնարկության առանձնահատկություններից բղխող ոբեկտներին զուգընթաց, իբրեւ բոլոր առեվտրական կազմակերպությունների մրցման ընդհանուր

կարեվորագույն ոբեկտ, առաջարկել հետեւմյալը։

1. Բանվորա-գյուղացիական սպառողի լավագույն սպասարկում (առեվտրական տեխնիկայի պարզեցում, ապրանք բաց թողնելու գործի արագացում, վաճառքի ապրանքների գների համար սպառողին լավ ինֆորմացիայի ստեղծում, վաճառելու նոր ծեփերի արմատացում—տուն տանել, շրջիկ առեվտուր, ապրանքն սպառողին մատչելի դարձնել յեզ այլն),

2. Աշխատակիցնա յեվ աշխատավորական ուժի նիշտ ոգտագործում (ուշագիր վերաբերմունք սպառողին, աշխատակիցների հանդեպ սպառողների կողմից արվող բողոքների ու հայտարարությունների վերացում, ճաշվա գաղարի նիշտ սահմանում յեվ ոգտագործում աշխատակիցների կողմից յեվ այլն)։

3. Կոոպերացիայի ներքին միջոցների մորթիվացիա (դժվար ծախվող ապրանքների յեվ անպետք ինվենտարի իրացում, ապառիկ յեվ առհաշվի պարտքերի կրնատում յեվ այլն)։

4. Ապրանքների վորակը լավացնելու միջոցներ, վատորակ ապրանքների հայտնաբերում յեվ հաշվառում, այս հարցի վերաբերյալ կապի հաստատում առենուրական ծեռնարկությունների հետ (արտադրական ըանվորների հետ միատեղ ժողովներ՝ ապրանքների վորակի մասին)։ Փայակուտակում յեվ կոոպերացում մրցման աշխատանքը կատարող խանութների ու ապարատի ենուղերի մեջ։

6. Վերադիր ծախսերի կրնատում յեվ վերադիր օ/օ-ի իջեցում։

7. Իր ժամանակին ապրանքների մատակարարում, տեսակի լրիվություն, այնպիսի ապրանքների հայթայթում ու մթերում, վորոնք կարողանան փոխարինել չեղած ապրանքները, բանջարեղեն յեվ մրգեղեն վաճառքի գործի կազմակերպում յեվ այլն:

8. Ապրանքաշղջանառության արագացում յեվ պայքար ապրանքայնացման (ավելորդ ապրանք հավաքելու, պառկեցնելու դեմ):

9. Ապրանքը վաղորոք կշռել՝ կապելու սովորություն յեվ պրակտիկա:

10. Տարայի ամբողջություն յեվ ռացիոնալ ոգտագործում:

11. Ռացիոնալիզատորական միջոցների կիրառում՝ հաշվառման ու հաշվետվության գործում: Հաշվեկշիռ ներկայացնելու ժամկետներ, հաշվետվության ու հաշվարկման գործի պարզեցում՝ մատակարարողների ու գնողների հետ: Փաստաթղթերի շրջանառության ու փոխադարձ հաշվիների արագացում:

12. Քար ու կեռքի, չափի ու հաշվի մեջ սպառողին խարելու վերացում: Պայքար սահմանված գները խախտողների դեմ: Գների քաղաքականությունը ճիշտ կերպով կիրառելու միջոցներ:

13. Պայքար զեղծարարությունների, յուրացումների ու պակսորդների դեմ, ինչպես յեվ բնական պակսորդը քաշցնելու համար:

14. Առեվտրական ծեռնարկությունների թժշկա—առողջապահական դրություն (սանի-

տարական բժիշկների կողմից ակտեր կազմելու, սպառողի յեվ աղմինիստրացիայի կողմից գանգատներ ու հայտարարություններ անելու վերացում):

15. Ապարատի կառուցվածքի պարզեցում:

Միության Կ. 6 ու Ցենտրոսոյուզն առանձնապես ընդգծում են զյուղական կոռպառայողեների յեվ զյուղի կոռպերացված մասսային սոցիալիստական մրցման մեջ բաւելու անհրաժեշտությունը:

Այս բանն առանձնապես անհրաժեշտ է, վորովհետեւ, ինչպես փորձը ցույց տվեց, սոցմրցման աշխատանքները թույլ կերպով են շոշափել զյուղը: Բացի վերոհիշյալ ոբեկտներից, իբրև հայքայրող ու մբեռող կոռպա: Կազմակերպությունների մրցման կարեվորագույն ոբեկտներ, պետք են առաջ քաշվեն՝ հայթայթման ու մթերման պլանի կատարման ու գերակատարման, հայթայթման ու մթերման ապարատի աշխատանքների վորակը լավացնելու, հայթայթումների ու մթերումների շուրջ հասարակական աշխատանքներ կազմակերպելու խնդիրներ: Բատրակին, ըրավորին ու միջակին, սրանց արտադրական կոռպերացմանը, տնտեսության կոլեկտիվացմանը յեվ այլն տնտեսական ոգնություն ցույց տալու խնդիրներ:

Բոլոր վերոհիշյալ ոբեկտների վերաբերմամբ մրցումը կատարվում է կոռպերացիայի աշխատակիցների կողմից, ըստ վորում մրցման դեկավարությունը տեղերում պետք է իրակա-

նացվի տեղկոմերի կողմից՝ տնտեսական խոր-
հրդակցությունների ու տնտեսական հանձնա-
ժողովների միջոցով:

ՓԱՍՏԵՐԵՐԻՆ ՄՐՑՄԱՆ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈ- ՐԱԳՈՒՅԹՆ ՈԲԵԿՏՆԵՐԸ

Փայատերերի մեջ մրցում առաջացնելու
հիմնական ոբեկտներն են՝

1. Կոռպերացման պլանի կատարումն ու
գերակատարումը,

2. Փայակուտակումը;

3. Հասարակական հսկողության ուժեղա-
ցումը՝ կոռպերացիայի աշխատանքների վրա
(ակտիվ ու իր աշխատանքը, խանութկոմների,
կոռպկոմների, կոռպերուների յեվ հսկող
հանձնաժողովների նիստեր, ակտիվի առաջար-
կությունների կատարում, հերթապահություն-
ներ, հասարակական հրահանգչություն յեվ
այլն);

4. Առաջքաշումը կոռպակտիվից՝ կոռպ-
ապարատի ղեկավար աշխատանքների համար.

5. Ավանդներ դնելու զործառնությունների
զարգացումը.

6. Փայատերերի կենցաղային կարիքների
լավագույն սպասարկումը.

7. Կոռպակտիվի աշխատանքի վորակի
բարձրացումը.

8. Փայատերերի կողմից արվող արժեքա-
փոր առաջարկությունների ընդունումը՝ բան-
վորագյուղացիական սպառողին լավագույն

կերպով սպասարկելու, ներքին միջոցները մո-
բիլիզացիայի յենթարկելու, առեվտրական ծեռ-
նարկության (խանութի) ապրանքների վորակը
լավացնելու, ծախսերը բացնելու, զեղծումների
պակսորդների յեվ այլ բաների դեմ պայքարե-
լու հարցերի շուրջը:

Վերոհիշյալ ամեն մի ոբեկտի վերաբերյալ
անհրաժեշտ և մրցում ստեղծել նայել կին կոռ-
պերատիվի ու յերիտասարդության ամեն մի
խմբակի մեջ:

Սոցիալիստական մրցուքութք օատ բույլ
կերպով և արտացոլում նայել արհմիառենա-
կան ու կոռպերատիվ մարմինների կուլտուր-
լուսավորական յեվ կենցաղային աշխատանի-
ների մեջ:

Դետք և ծավալել աշխատանքն ակումբնե-
րում ու կարմիր անկյուններում, կազմակերպել
մի շարք դասախոսություններ, հարց ու պա-
տասխանի յերեկոներ, կենդանի լրագրեր. պլա-
կատներ ու լողունգներ փակցնել, զրականու-
թյուն տարածել, առանձին տախտակներ սար-
քել, վորոնք արտացոլեն թե փոյտատերերի յեվ
թե մրցման աշխատանքների բացերն ու նվա-
ճումները:

ՀԱՎԵՐԻՆ ՊՐԵՄԻԱ ՏԱԼ.

Վերջին բանը, վորի վրա պետք և ուշա-
գրություն դարձնել, մրցման ծավալումը շահա-
գրգռելու եւ

Այս պատճառով՝ անհրաժեշտ և, իբրև

Ժամանակավոր նախամիջոց, մինչեւ այս հարցի
լուծումը, կիրառել հետեւյալը.

1. Ապարատի առանձին մասերի յեվ ա-
ռանձին ծեռնարկությունների ու բաժանմունք-
ների նկատմամբ, վորոնք ավելի յեն գերազան-
ցել, կիրառել դրոշակի պարզեվատրում, առան-
ձին պարզեվագրերի, գրադարանների ու այլ
բաների նվիրում:

2. Առավել չափով գերազանցող ամեն մի
ծառայողի նկատմամբ կիրառել առաջին հեր-
թին սովորելու ուղարկելու, ինչպես յեվ դրա-
մական պրեմիաներ տալու յեղանակ՝ այս նպա-
տակին սպազործելով արժեքավոր առաջար-
կությունների համար պրեմիաներ տալու գոն-
դերը:

3. Ամեն մի կոռպերատիվի նկատմամբ կի-
րառել պատասխանատու աշխատանքի համար
առաջ քաշելու, դասընթացներ յեվ այլ տեղեր
ուղարկելու յեղանակ:

Հնկերական բարեվլիերով,
Խորառծառի Սրհմիութենական Կ. Կ. ի
նախագահ՝ կիրկիծ

Ցենտրոսայուղի Վարչության փոխ-
նախագահ՝ կլիՄՈԽԻՆ

Մոռկա

14 սպուտոսի 1929 թ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0210816

3d. 357

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.